ԿԱՐԾԻՔ

«ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում 12.08.2022թ.-ին ՀՀ արդարադատության նախարարության կողմից հրապարակվել է նախագիծ՝ ՀՀ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին[1]:

Նախագծով «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում նախատեսվում են փոփոխություններ և լրացումներ դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտի և Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման կարգավորումներում: Մասնավորապես, նախագծով նախատեսվում է,

- Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունն իրականացնել Բարձրագույն դատական խորհրդի չորս անդամ ընդգրկող կազմով: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությամբ զբաղվող Բարձրագույն դատական խորհրդի կազմը յուրաքանչյուր կարգապահական վարույթով լինելու է տարբեր և ընդգրկելու է դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված երկուական անդամներ:
- Նախատեսվում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին հարցի քննության արդյունքով կայացվող որոշումների, ինչպես նաև դատավորի լիազորությունների դադարեցման վերաբերյալ որոշումների բողոքարկման կարգ, այն է՝ բողոքի քննությունն իրականացնելու է Բարձագույն դատական խորհուրդը՝ տվյալ կարգապահական վարույթով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի որոշման կայացմանը չմասնակցած անդամների կազմով,
- Բողոքի քննության համար նախատեսվում է մեկամսյա ժամկետ և դատավորին կարգապահական պատասխանատվության հարցի մասին որոշումների դեմ բողոքի քննությունը իրականացնելու է նույն ընթացակարգով և երաշխիքների պահպանմամբ, ինչ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունը:

Չնայած Նախագծի նպատակը ողջունելի է, քանի որ Բարձրագույն դատական խորհրդի ձևավորումից ի վեր դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշումների բողոքարկման մեխանիզմի բացակայության հարցը եղել է խնդրահարույց և հանդիսացել է միջազգային կառույցների կողմից կարգապահական պատասխանատվության վերաբերյալ տրվող հանձնարարականների ու առաջարկների կենտրոնական հարցերից մեկը[2], այդուամենայնիվ Նախագծով առաջարկվող բողոքարկման մեխանիզմը խնդրահարույց է հետևյալ պատճառաբանություններով.

1. Այսպես, Նախագծի 10-րդ հոդվածով նախատեսվում է Դատական օրենսգրքի 141-րդ հոդվածը լրացնել նոր 1.1-1.5.-րդ մասերով՝

---

[1] https://www.e-draft.am/projects/4643

[2] legal_acts_3306856097041_GrecoRC4_2021_15-P3-eng-Armenia-InterimRC4_4_.pdf (moj.am) Recommendation viii.

1.1. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության համար Բարձրագույն դատական խորհրդում ձևավորվում է Բարձրագույն դատական խորհրդի չորս անդամ ընդգրկող կազմ:
1.2. Կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննելիս և որոշումներ կայացնելիս Բարձրագույն դատական խորհրդի անունից հանդես է գալիս սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված կազմը՝ գործելով որպես Բարձրագույն դատական խորհուրդ:
1.3. Յուրաքանչյուր կարգապահական վարույթով ձևավորվում է սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված առանձին կազմ:
1.4. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված կազմում պետք է ընդգրկվեն Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված երկուական անդամներ:
1.5. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված կազմերը ձևավորվում են վիճակահանությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով:
Նախատեսվող փոփոխություններով, փաստորեն, կարգապահական պատասխանատվության հարցը քննարկելիս փոխվում է Բարձրագույն դատական խորհրդի կազմը՝ դրանով իսկ ՀՀ Սահմանադրությամբ և «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված մարմնի էությունը և բնույթը:
ՀՀ Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը: ***ՀՀ Սահմանադրության 174-րդ հոդվածի համաձայն՝ բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասն անդամից:***
ՀՀ Սահմանադրության 175-րդ հոդվածով սահմանվում են Բարձրագույն դատական խորհրդի լիազորությունները, այդ թվում՝ կազմում և հաստատում է դատավորների թեկնածուների, ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները, Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա, ներառյալ առաջխաղացման կարգով նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին, Ազգային ժողովին առաջարկում է Վճռաբեկ դատարանի դատավորների և նախագահի թեկնածուներին, [...] լուծում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը, լուծում է դատավորների լիազորությունների դադարեցման հարցը, հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնում Կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար և այլն:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրությամբ սահմանված է ԲԴԽ կազմը՝ կազմված 10 անդամներից: ***Սահմանադրության սահմանված բոլոր լիազորություններն իրականացնելիս Բարձրագույն դատական խորհուրդը գործում է որպես մեկ միասնական՝ կոլեգիալ մարմին:***

Առաջարկվող փոփոխությունների համատեքստում ստացվում է, որ ԲԴԽ լիազորություններից դատավորների կարգապահական պատասխանատվության հարցը լուծելիս, ինչպես նաև՝ դատավորների լիազորությունների դադարեցման հարցը լուծելիս ԲԴԽ-ն հանդես է գալիս որպես նոր և այլ կազմավորում ունեցող մարմին, ինչն ունակ է հանգեցնելու դրա կողմից կայացված որոշումների լեգիտիմության և վստահելիության խնդիրների:

Անդրադառնալով Բարձրագույն դատական խորհրդի կողմից կոլեգիալության կարգով որոշումների կայացման կարգին՝ ՀՀ Սահմանադրական դատարանը թիվ 1598 որոշմամբ

արձանագրել է, որ «[…] կոլեգիալությունը կառավարման սկզբունք է, որի պայմաններում ղեկավարումն իրականացվում է մի խումբ լիազորված անձանց կողմից: Կոլեգիալության կարգով որոշումների կայացումը ենթադրում է կարծիքների նախնական քննարկում և կոլեկտիվ քննարկման արդյունքում պաշտոնական փաստաթղթի մշակում ու ընդունում: […]Կոլեգիալ կառավարման անհրաժեշտությունը, մասնավորապես, նպատակ ունի բազմակարծության ապահովման (2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդված), սուբյեկտիվիզմի և կամայականության հաղթահարման, ինչպես նաև հանրության օբյեկտիվ շահերի առավել արտահայտման միջոցներով երաշխավորել տվյալ մարմնի առջև Սահմանադրությամբ և օրենքներով առաջադրված հանրային կարևորություն ունեցող գործառույթների արդյունավետ իրականացումը: […] Կոլեգիալ մարմինների հանրային-իշխանական գործունեության կարգավորման հիմքում առաջնահերթ կարևորվում են որոշում (կամ պաշտոնական այլ փաստաթուղթ) ընդունելու իրավական անհրաժեշտությունը, իսկ որոշ դեպքերում՝ հրատապությունը, ***մյուս կողմից՝ օբյեկտիվ պատճառներով կոլեգիալ մարմնի նիստին տվյալ մարմնի բոլոր անդամների մասնակցությունն ապահովելու անհնարինության պայմաններում այդ մարմնի բնականոն գործունեությունն ապահովող նվազագույն պայմանների, այն է՝ կոլեգիալ մարմնի անհրաժեշտ նվազագույն թվով անդամների մասնակցությամբ որոշումների ընդունման երաշխավորումը:*** […] Սահմանադրական դատարանի գնահատմամբ այդպիսի հավասարակշռությունը ենթադրում է կոլեգիալ մարմնի նիստերին տվյալ մարմնի անդամների անհրաժեշտ այնպիսի թվաքանակի ներկայություն, որը ճանաչելի կդարձնի տվյալ մարմինը որպես այդպիսին, կերաշխավորի նրա կողմից լեգիտիմ որոշումներ կայացնելու կարողունակությունը»:[3]

Անդրադառնալով դատավորների թեկնածուների հավակնորդներին համապատասխան ցուցակ ներառելու մասին կայացվող որոշումների համար անհրաժեշտ ձայներին՝ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «Բարձրագույն դատական խորհրդի կողմից դատավորի թեկնածուի հավակնորդին համապատասխան ցուցակ ներառելու մասին կայացվող որոշումներն այս ատյանի ձևավորման վերը նշված նպատակին համահունչ կայացնելու համար օրենսդրի կողմից իրավացիորեն ընտրվել է որոշումների կայացման ձայների այնպիսի քանակ, որն ապահովի պետական իշխանության երկու ճյուղերից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամների համաձայնությունը, ինչը, տվյալ դեպքում Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունն է՝ առնվազն 6 ձայն: Սա բխում է դատական իշխանության ձևավորման՝ ներառյալ դատավորներ նշանակելու ընթացակարգի բաղադրիչ համարվող մասերին վերաբերող որոշումներին առաջադրվող ժողովրդավարական լեգիտիմության պահանջից»:[4]

Հետևաբար, Բարձրագույն դատական խորհրդի որպես մեկ միասնական կոլեգիալ մարմնի կողմից դատավորների կարգապահական պատասխանատվության և առավել ևս դատավորի լիազորությունները դադարեցնելու հարցի լուծման համար այլ կազմի նախատեսումը, քան մեկ միասնական մարմնի կողմից որոշման կայացումը իրավաչափ չէ և Սահմանադրական դատարանի վերոգրյալ որոշմամբ արտահայտած դիրքորոշման համատեքստում բացառում է

---

[3] ՀՀ Սահմանադրական դատարան, թիվ 1598 որոշում, 10 հունիսի 2021թ. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=153643

[4] Նույն տեղում:

Բարձրագույն դատական խորհրդի կողմից լեգիտիմ որոշումների կայացման կարողունակությունը:

Միաժամանակ, անհրաժեշտ է փաստել, որ Բարձրագույն դատական խորհրդի գործունեության լեգիտիմության վրա ազդելու է նաև այն հանգամանքը, որ մյուս լիազորություններն իրականացնելիս և որոշումներ կայացնելիս այն հանդես է գալու մեկ միասնական 10 անդամից բաղկացած կոլեգիալ մարմնի կարգավիճակով: Ընդ որում, որպես դատարան հանդես գալու մյուս դեպքերում՝ իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում կամ ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու վերաբերյալ հարցերը քննելիս ևս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալու 10 անդամից բաղկացած կոլեգիալ դատարանի կարգավիճակով: Նման տարբերակումը որևէ կերպ հիմնավորված չէ:

2. Նախագծի նույն հոդվածի 1.3 կետը սահմանում է, որ յուրաքանչյուր կարգապահական վարույթով ձեւավորվում է առանձին կազմ, իսկ 1.5 կետը սահմանում է, որ նախատեսված կազմերը ձևավորվում են վիճակահանությամբ՝ Բարձրագույն դատական խորհրդի սահմանած կարգով:
Ստացվում է, որ կարգապահական պատասխանատվության հարցեր քննելիս դատարանի կարգավիճակով հանդես եկող Բարձրագույն խորհրդի կազմը ձևավորվելու է վիճակահանությամբ, ինչը պրակտիկայում ունակ է հանգեցնելու ինչպես որպես դատարան գործող մարմնի ձևավորման նկատմամբ միջամտության, այնպես էլ անկախության, անաչառության և լեգիտիմության այլ վտանգների:

3. Նախագծի 7-րդ հոդվածով նախատեսվում է Դատական օրենսգրքի 92-րդ հոդվածի 2-րդ մաս լրացնել նոր երկրորդ եւ երրորդ նախադասություններով, համաձայն որոնց՝ «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին հարցերը քննելիս Բարձրագույն դատական խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի՝ սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված կազմում ընդգրկված անդամների ընդհանուր թվի կեսից ավելին..»:

Այսինքն, Բարձրագույն Դատական խորհրդի երեք անդամից բաղկացած կազմը կարող է քննարկել և որոշում կայացնել դատավորի լիազորությունների դադարեցման վերաբերյալ, ինչը կրկին Խորհրդի սահմանադրական կարգավիճակի իմաստազրկում է:

4. Նախագծի 15-րդ հոդվածով Դատական օրենսգրքի 154-րդ հոդվածում նախատեսվում է կատարել լրացում. «Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ընդունվում է խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ սույն օրենսգրքի 141-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կազմի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Եթե քվեարկության արդյունքում որոշման օգտին բավարար քանակի ձայների բացակայության պատճառով որոշում չի ընդունվում, ապա դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը համարվում է ընդունված»:

Նման կարգավորման պայմաններում, չորս անդամից կազմված Խորհրդի կազմով որոշումների կայացման համար օբյեկտիվորեն կարող են ձայներն անբավարար լինել՝ հանգեցնելով նաև Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության տապալման և կարգապահական պատասխանատվության ինստիտուտի իմաստազրկման:

5. Առաջարկվող փոփոխություններով (Նախագծի հոդված 18)՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման դեմ բողոքի քննությունն իրականացնում է Բարձրագույն դատական խորհուրդը՝ որոշման կայացմանը չմասնակցած անդամների կազմով:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու և դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին որոշումների դեմ բողոքը քննելիս Բարձրագույն դատական խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի՝ սույն օրենսգրքի 156.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կազմում ընդգրկված անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցի մասին որոշումների դեմ ներկայացված բողոքի քննության արդյունքով Բարձրագույն դատական խորհրդի որոշումն ընդունվում է խորհրդակցական սենյակում՝ բաց քվեարկությամբ՝ սույն օրենսգրքի 156.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կազմի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Եթե քվեարկության արդյունքով որոշման օգտին բավարար քանակի ձայների բացակայության պատճառով որոշում չի ընդունվում, ապա ընդունված է համարվում այն որոշումը, որն առավել բարենպաստ է դատավորի համար, իսկ որոշումը կազմում և ստորագրում են սույն օրենսգրքի 156.2-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կազմի այն անդամները, որոնք քվեարկել են այդ որոշման օգտին:

Վենետիկի հանձնաժողովը, կարևորելով կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումների բողոքարկման հնարավորությունը, ընդունել է, որ բողոքարկման մեխանիզմը պետք է անկախ դատարանի կարգավիճակ ունենա[5]: ***Ավելին, վերանայող դատական մարմնի կազմը պետք է նախատեսված լինի օրենքով:*** Որոշումները պետք է վերանայվեն անաչառ դատական մարմնի կողմից, որը բողոքը կքննի դատաքննության բոլոր երաշիքները ապահովելով[6]:

Այս համատեքստում, Նախագծով սահմանված չէ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման դեմ բողոքի քննությունն իրականացնող ատյանի անդամների կազմն ու ընդհանուր թիվը: Նման պայմաններում, Բարձրագույն դատական խորհրդի բոլոր տասն անդամների համալրված չլինելու դեպքում կարգապահական պատասխանատվության հարցի մասին որոշման դեմ բողոքի քննությունը կարող է իրականացվել տարբեր թվակազմով ատյանի կողմից՝ հանգեցնելով ինչպես իրավազորության, այնպես էլ որոշումների կայացման համար անհրաժեշտ նվազագույն

---

[5] CDL-AD(2007)028, Report on Judicial Appointments by the Venice Commission, §25. See also CDL-AD(2018)029, Opinion on the provisions on the Prosecutorial Council in the draft Organic Law on the Prosecutor's Office and on the provisions on the High Council of Justice in the existing Organic Law on General Courts of Georgia, §53; CDL-AD(2016)009, Final Opinion on the revised draft constitutional amendments on the Judiciary (15 January 2016) of Albania, §62.

[6] CDL-AD(2015)042, Opinion on the Laws on the Disciplinary Liability and Evaluation of Judges of "The Former Yugoslav Republic of Macedonia", §96.

բավարար թվակազմի տարբերության տարբեր դատավորների վերաբերյալ որոշումների կայացման համար՝ խախտելով նաև իրավական որոշակիության սկզբունքը և օրենքով նախատեսված դատարանի կողմից գործի քննության՝ դատավորի իրավունքը:

Հաշվի առնելով ամբողջ վերոգրյալը՝ առաջարկում ենք.

Նախագիծը հանել շրջանառությունից և շահագրգիռ կողմերի հետ քննարկումների հիման վրա մշակել դատավորների կարգապահական պատասխանատվության հարցի մասին որոշումների բողոքարկման մեխանիզմ, որը կհամապատասխանի ՀՀ Սահմանադրությանը և Բարձրագույն դատական խորհրդի սահմանադրաիրավական բնույթին և էությանը:

Դատավորների կարգապահական պատասխանատվության հարցի մասին որոշումների բողոքարկման մեխանիզմի ներդրման հարցը քննարկել Սահմանադրական բարեփոխումների խորհրդի և Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի գործունեության շրջանակներում:

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստան

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ